ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/2411/02/24 ք. Երևան
26 Հուլիսի 2024թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա. Սաֆարյանի (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով «Մար-Մոս» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ «Մար-Մոս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 27.11.2023 թվականի թիվ Ա-5164 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

Հայցվորը 02.04.2024 թվականին էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի՝ «Մար-Մոս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 27.11.2023 թվականի թիվ Ա-5164 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին մասին, որը 02.04.2024 թվականին բաշխվել է դատավոր Մ. Տաշչյանին:
Դատարանի (դատավոր Մ. Տաշչյան) 08.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցվորը հայցադիմումը և կից փաստաթղթերը կրկին՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է Դատարան:
Դատարանի (դատավոր Մ. Տաշչյան) 16.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Հայցվորը հայցադիմումը և կից փաստաթղթերը կրկին՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է Դատարան:
Դատարանի (դատավոր Մ. Տաշչյան) 19.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Հայցվորը հայցադիմումը և կից փաստաթղթերը կրկին՝ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել է Դատարան, որը 22.04.2024 թվականին բաշխվել է դատավոր Ա. Սաֆարյանին:
Նշված քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով դատավորի աշխատակազմին հասանելի է դարձել 23.04.2024 թվականին:
Դատարանի 29.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Նշված որոշման դեմ Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք:
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.06.2024 թվականի որոշմամբ «Մար-Մոս» ՍՊ ընկերության անունից բերված վերաքննիչ բողոքը բավարարվել և թիվ ԵԴ2/2411/02/24 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 29.04.2024 թվականի Հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվել է:
Նշված քաղաքացիական գործը 12.07.2024 թվականին բաշխվել է դատավոր Ա. Սաֆարյանին և դատավորի աշխատակազմին Համակարգի միջոցով հասանելի դարձել 23.07.2024 թվականին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, իսկ սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված անվերապահ բեկանման հիմքերից որևէ մեկով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերացվելու դեպքում առաջին ատյանի դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը: Այս դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ.
Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
Սույն դեպքում Դատարանն արձանագրում է, որ առնվազն հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում առկա չէ գործը գրավոր ընթացակարգով քննելու անհնարինություն, հետևաբար գործը ենթակա է քննության գրավոր ընթացակարգով:
Միաժամանակ, նկատի ունենալով, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդյանուր իրավասության քաղաքացիական դատարանի նախագահ Ա. Գաբրիելյանի 17.07.2024 թվականի թիվ 241-Ա հրամանի համաձայն՝ դատավոր Ա. Սաֆարյանը 01.08.2024-15.08.2024թթ. ներառյալ գտնվելու է ամենամյա հերթական արձակուրդում, հետևաբար գործի ամբողջական, բազմակողմանի և օբյեկտիվ քննությունն ապահովելու համար անհրաժեշտ է երեսնօրյա ժամկետը երկարաձգել տասն օրացուցային օրով և գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 16.09.2024 թվականին:
Միաժամանակ, Դատարանը գտնում է, որ Պատասխանող ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանից պետք է պահանջել «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-23/69» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 199-րդ, 200-րդ, 202-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝ Դատարանը.

ՈՐՈՇԵՑ

1. «Մար-Մոս» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի՝ «Մար-Մոս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 27.11.2023 թվականի թիվ Ա-5164 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 16.09.2024 թվականին:

3. ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանից պահանջել Դատարան ներկայացնել «ԱՄԱՀ-ԷԱՃԾՁԲ-23/69» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Արմինե Սաֆարյան Digitally signed by SAFARYAN ARMINE 6107840465

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am